ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
**PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI**


ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1 , 403 սենյակ
հեռ (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

Lori, Alaverdi,
Zoravar Andranik str.8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru


ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ալավերդու Օրհուս կենտրոն չեն դադարում ահազանգերը առողջության վատթարացման բնակիչների մասսայական խնդրով, որոնք բոլորի մոտ նույնատիպ դրսեւորումներն ունեն՝ աղիքային պրոբլեմ, ջերմություն, գլխացավ, թուլություն: Ալավերդու բժշկական կենտրոնից տեղեկացել ենք, որ ինֆեկցիոն բաժանմունքը այդ առումով մեծ ծանրաբեռնվածություն չունի, աշխատում է սովորական ռեժիմով:

«Հայջրմուղկոյուղու» Ալավերդու տեղամաս այցելությունից իմացանք, որ ահանզանգերի հետքերով բնակարաններից նմուշառված ջրի մանրէաբանական լաբորատոր անալիզների արդյունքում շեղում չի հայտնաբերվել:

ՀՀ Առողջապահության նախարարության Լոռու մարզային կենտրոնի բժիշկ-հիգիենիստի տեղեկացմամբ՝ կատարվել են հետազոտություններ եւ մինչ այս պահը, ազգաբնակչությանը մատակարարվող խմելու ջրի հետ կապված մանրէաբանական եւ քիմիական նորմատիվային խախտումներ եւ շեղումներ չկան:

Սակայն, անընդհատ ավելանում է վերոհիշյալ առողջական խնդիրներով մարդկանց թիվը: Չպարզված խնդրից հասարակությունը հայտնվել է խուճապային իրավիճակում:

Խնդրում եմ Ձեր միջամտությունը հարցի էությունը ճշտելու եւ հիվանդացության պատճառը հայտնաբերելու համար:

Շնորհակալություն:

Հարգանքով՝
Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող Անուշ Էվոյան

13.08.2015թ.